«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ JCB 3CX ԷՔՍԿԱՎԱՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԱԷԿ-ԳՀՇՁԲ-13/23-03/21

ЗАО «АЭС» (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«17» 05 2023թ.

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ–ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 06.05.2022թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն՝ Արգամ Հարությունյանի, որը գործում է «ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **JCB 3CX էքսկավատորի տեխնիկական սպասարկման և նորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա)Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի (գործարքի) վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում (Հիմք՝ ՀՀ կառավարության 17 մարտի 2022 թվականի N 319-Ն որոշում):

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և ինչը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներից են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից դաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք դանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ	0010, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2Ա շենք,
Հ/Հ 1930000199200100	Հ/Հ 1930040338440100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 04401874,	ՀՎՀՀ 00108186
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69	Հեռ.՝ 099-09-09-02
Հեռ.՝ 20-04-91, 30-20	E-mail: allengroup@mail.ru
E-mail: anpp@anpp.am	
..... Ս. Մաթևոսյան	..... Ա. Հարությունյան
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

17.05.

Հավելված N 1
2023թ. կնքված
***N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-13/23-03/21** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130	**JCB 3CX մակնիշի էքսկավատորի հետ երաշխիքային մասնագիտական տեխնիկական սպասարկումը և նորոգումը կատարել համաձայն կից ներկայացված ծավալաթերթի**	լրակազմ	**1500000**	1	«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի վարչական տարածք կամ ոչ հեռու, քան 50 կմ հեռավորությամբ	Պայմանագրի կնքման օրվանից **մեկ տարի (365 օր) ժամկետով**

Լրացուցիչ պայմաններ՝

1. Մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու կարգը՝ համաձայն ՀՀ Կառավարության №526 առ 04.05.2017թ. որոշման 31-րդ կետի 23-րդ ենթակետի:
2. **Պայմանագրի առավելագույն գին է սահմանվել՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**
3. Տեխնիկական սպասարկումը իրականացնել համաձայն սերվիսային գրքույկի:
4. Ծառայությունը մատուցել ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ներառյալ փոխարինվող նոր՝ չօգտագործված պահեստամասերի և նյութերի արժեքները:
5. Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Ծանոթություն՝ Պայմանագրի կառավարիչ՝ Ա. Գրիգորյան, հեռ. 010282960, E mail ashot.grigoryan@anpp.am

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... **Ս. Մաթևոսյան**
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

..... **Ա. Հարությունյան**
Կ.Տ.

17.05.

Հավելված N 1.1
2023թ. կնքված
***N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-13/23-03/21** ծածկագրով պայմանագրի*

Ծավալաթերթ-գնացուցակ

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	**ՀՀ դր**
	Ծառայություններ			
1	Ճանապարհածախս	կմ	1	200
2	Տեխ սպասարկում SU-1 (Յուրաքանչյուր 250մ/ժ)	հատ	1	25 000
3	Տեխ սպասարկում SU-2 (Յուրաքանչյուր 500մ/ժ)	հատ	1	25 000
4	Տեխ սպասարկում SU-3 (Յուրաքանչյուր 1000մ/ժ)	հատ	1	50 000
5	Տեխ սպասարկում SU-4 (Յուրաքանչյուր 2000մ/ժ)	հատ	1	100 000
6	Փականագործի ծառայություն	ժամ	1	15 000
7	Փականագործի մինիմալ ծառայություն	հատ	1	30 000
8	Էլեկտրիկի ծառայություն	ժամ	1	15 000
9	Էլեկտրիկի մինիմալ ծառայություն	հատ	1	30 000
10	Եռակցման աշխատանքներ	ժամ	1	25 000
11	Եռակցման մինիմալ աշխատանքներ	հատ	1	50 000
12	Վառելիքի մղիչի հանում տեղադրում	հատ	1	80 000
13	Փոխանցման տուփի հանում տեղադրում	հատ	1	150 000
14	Փոխանցման տուփի վերանորոգում	հատ	1	150 000
15	Շարժիչի վերանորոգում	հատ	1	500 000
16	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում	հատ	1	100 000
17	Շարժիչի լվացում	հատ	1	40 000
18	Ծնկաձև լիսեռի հղկում	հատ	1	60 000
19	Շարժիչի բլոկի մակերեսի հղկում	հատ	1	60 000
20	Շարժիչի բլոկի հղկում	հատ	1	100 000
21	Շարժիչի գլխիկի հղկում	հատ	1	85 000
22	Շարժիչի գլխիկի ստուգում	հատ	1	60 000
23	Շարժիչի գլխիկի վերանորոգում	հատ	1	300 000
24	Շարժիչի գլխիկի մասնակի վերանորոգում	հատ	1	120 000
25	Շարժիչի պարկուճների տեղադրում	հատ	1	160 000
26	Վառելիքի մղիչի վերանորոգում	հատ	1	650 000
27	Վառելիքի մղիչի ստուգում լվացում	հատ	1	75 000
28	Բոցամուղի վերանորոգում	հատ	1	50 000
29	Հիդրոմուրճի քանդում հավաքում	հատ	1	60 000
30	Ազոտի լիցքավորում	հատ	1	40 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	ՀՀ դր
	Պահեստամասեր			
	Յուղեր և քսայուղեր			
1	Շարժիչի յուղ 15W40	լիտր	1	3 000
2	Հիդրավլիկ յուղ VG46	լիտր	1	2 800
3	Տրանսմիսիոն յուղ 80W90	լիտր	1	5 000
4	Տրանսմիսիոն յուղ 85W90	լիտր	1	5 000
5	Տրանսմիսիոն յուղ 10W30	լիտր	1	5 000
6	Տրանսմիսիոն յուղ 80W	լիտր	1	6 000
7	Հակասառիչ հեղուկ	լիտր	1	3 000
8	Քսայուղ 18կգ	հատ	1	115 000
9	Քսայուղ 15կգ	հատ	1	96 000
10	Քսայուղ 12.5կգ	հատ	1	80 000
11	Քսայուղ 400գր	հատ	1	4 000
12	Քսայոյ հիդրոմուրճի 400գր	հատ	1	6 000
13	Քսայուղ տելեսկոպիկ հանգույցների 400գր	հատ	1	10 000
14	Քսայուղ տելեսկոպիկ հանգույցների 5կգ	հատ	1	100 000
15	Քսայուղ տելեսկոպիկ հանգույցների	կգ	1	20 000
	Զտիչներ, համալրող պահեստամասեր			
1	Շարժիչի յուղի զտիչ	հատ	1	6 000
2	Վառելիքի նուրբ զտման զտիչ	հատ	1	8 000
3	Վառելիքի կոշտ զտման զտիչ	հատ	1	8 000
4	Օդի զտիչ	կ-կտ	1	18 000
5	Օդի առաջնային զտիչ	հատ	1	13 000
6	Օդի երկրորդային զտիչ	հատ	1	5 000
7	Խցիկի օդի զտիչ	հատ	1	6 000
8	Օդորակիչի օդի զտիչ	հատ	1	6 000
9	Տրանսմիսիոն յուղի զտիչ	հատ	1	6 000
10	Հիդրավլիկ յուղի զտիչ	հատ	1	12 000
11	Հիդրավլիկ յուղի ցանցային զտիչ	հատ	1	12 000
12	Վառելիքի հավաքական զտիչ	հատ	1	50 000
13	Զտիչի բաժակ	հատ	1	20 000
14	Վառելիքի յուղի ռետինե կոմպլեկտ	հատ	1	12 000
15	Օդի զտիչի պատյան	հատ	1	100 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	ՀՀ դր
	Թափքի մասեր			
1	Շերեփի ատամ	հատ	1	6 000
2	Շերեփի անկյունային ատամ	հատ	1	12 000
3	Հեղյուս մանեկ	հատ	1	1 500
4	Հեղյուս ատամի	հատ	1	1 000
5	Մանեկ ատամի	հատ	1	500
6	Շերեփի դանակ	հատ	1	180 000
7	Յուղիչ	հատ	1	900
8	Կողային հայելի	հատ	1	10 800
9	Հայելու ամրակ	հատ	1	10 800
10	Կանգ ազդանշանային պաշտպանիչ	հատ	1	13 500
11	Փողրակների պաշտպանիչ	հատ	1	18 000
12	Կայունարարի կափարիչ	հատ	1	10 800
13	Վռան հետևի սլաքի	հատ	1	18 000
14	Վռան դիմացի սլաքի	հատ	1	13 500
15	Վռան հետևի թևի	հատ	1	22 500
16	Վռան դիմացի շերեփի	հատ	1	9 000
17	Վռան հետևի սայլակի	հատ	1	9 000
18	Վռան հետևի շերեփի	հատ	1	13 500
19	Մատ հետևի սլաքի	հատ	1	31 500
20	Մատ հետևի շերեփի	հատ	1	22 500
21	Մատ դիմացի սլաքի	հատ	1	19 800
22	Մատ դիմացի շերեփի	հատ	1	18 000
23	Մատ հետևի թևի	հատ	1	25 200
24	Մատ հետևի սայլակի	հատ	1	27 000
25	Մատ կամրջակի	հատ	1	36 000
26	Տափօղակ	հատ	1	4 500
27	Տափօղակ պլաստմասե	հատ	1	13 500
28	Շպլինտ	հատ	1	2 700
29	Շերեփ 350մմ	հատ	1	400 000
30	Շերեփ 600մմ	հատ	1	500 000
31	Շերեփ 800մմ	հատ	1	550 000
32	Դիմապակի	հատ	1	150 000
33	Դիմապակի ներքևի	հատ	1	36 000
34	Հետևի ապակի	հատ	1	126 000
35	Դռան ապակի	հատ	1	117 000
36	Կողային ապակի	հատ	1	76 500
37	Կայունարարի իրան	հատ	1	144 000
38	Պլաստմասե պաշտպանիչ	հատ	1	27 000
39	Հարվածամեղմիչ դռան	հատ	1	9 000
40	Հարվածամեղմիչ	հատ	1	9 000
41	Հեղյուս կամրջակի	հատ	1	22 500
42	Աստիճան	հատ	1	18 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	ՀՀ դր
	Էլեկտրական մասեր			
1	Առջևի լուսարձակ	հատ	1	90 000
2	Ստոպի ապակի	հատ	1	4 500
3	Կայծման փական	հատ	1	18 000
4	Կափյուրի բաժանարար	հատ	1	90 000
5	Կափյուր տեղափոխման տուփի	հատ	1	108 000
6	Անջատիչ 4x4	հատ	1	76 500
7	Գեներատոր	հատ	1	108 000
8	Թողարկիչ	հատ	1	117 000
9	Շարժիչի յուղի ճնշման տվիչ	հատ	1	13 500
10	Ջրի ջերմաստիճանի տվիչ	հատ	1	13 500
11	Փոխանցման տուփի ճնշման տվիչ	հատ	1	18 000
12	Փոխանցման տուփի ջերմաստիճանի տվիչ	հատ	1	18 000
13	Հետևի լույս հավաքական	հատ	1	10 800
14	Հաղորդալար	հատ	1	4 500
15	Ապահովիչների բլոկ	հատ	1	36 000
16	Մարտկոց	հատ	1	90 000
17	Անջատիչ	հատ	1	9 000
18	Էլ շարժիչ ապակեմաքրիչի	հատ	1	27 000
19	Էլ շարժիչ ապակեմաքրիչի (ջրի)	հատ	1	13 500
20	Անջատիչ ղեկանիվի	հատ	1	45 000
21	Ռելե	հատ	1	9 000
	Քփացուցիչներ, խտարարներ			
1	Կայունարարի քփացուցիչ	հատ	1	3 600
2	Կայունարարի կարգավորվող քփացուցիչ	հատ	1	9 000
3	Տելեսկոպիկ թևի վերդիր	կ-կտ	1	36 000
4	Տելեսկոպիկ թևի վերդիր	հատ	1	6 300
5	Հիդրոգլանի խտարարներ (կայունարար)	կ-կտ	1	27 000
6	Հիդրոգլանի խտարարներ (դիմացի սլաք)	կ-կտ	1	40 500
7	Հիդրոգլանի խտարարներ (հետևի սլաք)	կ-կտ	1	58 500
8	Հիդրոգլանի խտարարներ (հետևի սայլասկի)	կ-կտ	1	72 000
9	Խտարարների կոմպլեկտ բարձակի փոխարինող	հատ	1	22 500
10	Խտարարների կոմպլեկտ բարձակի գործարանային	հատ	1	45 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	<< դր
	Տրանսմիսիա			
1	Արգելակման կոճղակ	հատ	1	9 000
2	Կիսասռնի հետևի	հատ	1	76 500
3	Կամրջակի կիսալիսեռ	հատ	1	135 000
4	Կիսասռնու մուֆթ	հատ	1	36 000
5	Ղեկային համակարգի ձգան	հատ	1	27 000
6	Արգելակման ֆրիկցիոներ	կ-կտ	1	117 000
7	Արգելակման ֆրիկցիոներ	հատ	1	4 500
8	Արգելակման սկավառակ	հատ	1	4 500
9	Դիֆերենցիալի պատյան	հատ	1	126 000
10	Սաթելիթների կոմլեկտ	կ-կտ	1	72 000
11	Տափօղակ դիֆերենցիալի	հատ	1	9 000
12	Տափօղակ դիֆերենցիալի	կ-կտ	1	36 000
13	Կարդանի խաչուկ	հատ	1	13 500
14	Կիսասռնու խաչուկ	հատ	1	13 500
15	Հեղյուս կարդանի	հատ	1	1 800
16	Խաչուկի ամրակ	հատ	1	4 500
17	Դիֆերենցիալ ատամնանիվի զույգ	հատ	1	135 000
18	Անվադող R28	հատ	1	300 000
19	Անվադող R26	հատ	1	300 000
21	Անվադող R18	հատ	1	180 000
23	Առանցքակալ անվակունդի	հատ	1	22 500
24	Առանցքակալ դիմացի կամրջակի	հատ	1	18 000
25	Առանցքակալ հետևի կամրջակի	հատ	1	18 000
26	Հեղյուս անվահեծի	հատ	1	3 600
27	Մանեկ անվահեծի	հատ	1	2 700
28	Ռետինե խտարար փոխանցման տուփի	հատ	1	22 500
29	Ռեդուկտորի սալնիկ	հատ	1	22 500
30	Անվակունդի պատյան	հատ	1	135 000
31	Կարդանային լիսեռ	հատ	1	180 000
32	Անվախուց R28	հատ	1	54 000
33	Անվախուց R26	հատ	1	54 000
35	Անվախուց R18	հատ	1	27 000
36	Անվահեծ R28	հատ	1	225 000
37	Անվահեծ R26	հատ	1	225 000
39	Անվահեծ R18	հատ	1	135 000
40	Հիդրոտրանսֆորմատորի սկավառակ	հատ	1	27 000
41	Փոխանցման տուփի ճնշման կարգավորիչ	հատ	1	180 000
42	Փոխանցման տուփի յուղի մղիչ	հատ	1	180 000
43	Ֆրիկցիոն սկավառակ	հատ	1	22 500
44	Մետաղական սկավառակ	հատ	1	18 000
45	Ռետինե օղակ	հատ	1	18 000
46	Շրջադարձի կուլակ	հատ	1	270 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	ՀՀ դր
	Հիդրավլիկ համակարգ			
1	Ճկախողովակ հիդրոմուրճի	հատ	1	54 000
2	Ճկախողովակ 1/4	մ	1	9 000
3	Ճկախողովակ 3/8	մ	1	13 500
4	Ճկախողովակ 1/2	մ	1	18 000
5	Ճկախողովակ 5/8	մ	1	22 500
6	Ճկախողովակ 3/4	մ	1	22 500
7	Ճկախողովակ 1	մ	1	45 000
8	Կցամաս 1/4	հատ	1	4 500
9	Կցամաս 3/8	հատ	1	9 000
10	Կցամաս 1/2	հատ	1	13 500
11	Կցամաս 3/4	հատ	1	18 000
12	Կցամաս 5/8	հատ	1	27 000
13	Սեղմող պարկուճ 3/8	հատ	1	2 700
14	Սեղմող պարկուճ 1/2	հատ	1	4 500
15	Սեղմող պարկուճ 3/4	հատ	1	9 000
16	Սեղմող պարկուճ 5/8	հատ	1	18 000
17	Հիդրավլիկի գլան հետևի թևի	հատ	1	720 000
18	Հիդրավլիկի գլան հետևի շերեփի	հատ	1	585 000
19	Հիդրավլիկի գլան հետևի սլաքի	հատ	1	585 000
20	Հիդրավլիկի գլան ոտնակի	հատ	1	360 000
21	Հիդրավլիկի գլան շրջադարձի	հատ	1	450 000
22	Հիդրավլիկի գլան դիմացի շերեփի	հատ	1	405 000
23	Հիդրավլիկի գլան դիմացի սլաքի	հատ	1	405 000
24	Հիդրավլիկ գլան բեռնաթափման	հատ	1	270 000
25	Պատյան արգելակման	հատ	1	36 000
26	Հիդրավլիկ մղիչ գործարանային	հատ	1	630 000
27	Հիդրավլիկ մղիչ փոխարինող	հատ	1	400 000
28	Հիդրոմարտկոց արգելակման	հատ	1	112 500
29	Հիդրոմարտկոց	հատ	1	112 500
30	Բաժանարարի ռետինե խտարար	հատ	1	27 000
31	Փոշեմաքրիչ խտարար	հատ	1	9 000
32	Խտարար բաժանարարի	հատ	1	13 500
33	Յուղի ճնշման կարգավորիչ	հատ	1	90 000
34	Բաժանարար դիմացի	հատ	1	1 400 000
35	Բաժանարար հետևի	հատ	1	2 541 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	<< դր
	Շարժիչ և համալրող մասեր			
227	Շարժափոկի ձգող հոլովակ	հատ	1	22 500
228	Շարժափոկի հոլովակ	հատ	1	67 500
229	Փոկ	հատ	1	13 500
230	Ջրի պոմպ	հատ	1	54 000
231	Ջրի ռադիատոր	հատ	1	250 000
232	Թերմոստատ	հատ	1	25 000
233	Թերմոստատի պատյան	հատ	1	13 500
234	Գազի ճոպան	հատ	1	18 000
235	Շարժիչի բարձակ	հատ	1	13 500
236	Ձեռքի վառելիքի մղիչ	հատ	1	20 000
237	Զտիչի ռետինե կոմպլեկտ	հատ	1	13 500
238	Մղիչի մատ	հատ	1	13 500
239	Ընդարձակման բաք	հատ	1	27 000
240	Ընդարձակման բաքի կափարիչ	հատ	1	7 200
241	Վառելիքի բարձր ճնշման մղիչ	հատ	1	1 000 000
242	Տուրբոմղիչ փոխարինող	հատ	1	250 000
244	Ներդիր լիսեռի	կ-կտ	1	36 000
245	Վառելիքի բակ	հատ	1	450 000
246	Ներդիր շարժաթևի	կ-կտ	1	45 000
247	Բոցամուղ	հատ	1	100 000
248	Ռետինե փողրակ	հատ	1	75 000
249	Միջադիրների կոմպլեկտ	հատ	1	45 000
250	Ծնկաձև լիսեռ	հատ	1	650 000
251	Վառելիքի հետադարձ խողովակ	հատ	1	18 000
252	Վառելիքի զտիչի խողովակ	հատ	1	9 000
253	Վառելիքի խողովակի ամրակ	հատ	1	4 500
254	Բոցամուղի խողովակ	հատ	1	27 000
255	Շարժիչի յուղի մղիչ	հատ	1	58 500
256	Շարժիչի ռետինե խտարար	հատ	1	45 000
257	Շարժաթև	հատ	1	63 000
258	Մխոց	հատ	1	54 000
259	Մխոցաօղ	հատ	1	18 000
260	Կարտերի խտարար	հատ	1	13 500
261	Լիսեռի կիսալուսին	հատ	1	9 000
262	Զսպանակ միջդետալային	հատ	1	10 800
263	Յուղի մխոց	հատ	1	4 500
264	Շարժիչի փական արտածման	հատ	1	13 500
265	Շարժիչի փական ներածման	հատ	1	13 500
266	Կարտերի խտարար	հատ	1	135 000
267	Շարժիչի գլխիկ	հատ	1	1 500 000

N	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
			հատ	ՀՀ դր
268	Օդորակիչ	հատ	1	40 500
271	Փականի ուղղորդիչ	հատ	1	7 200
272	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	1	22 500
273	Միջադիր արտածման կոլեկտորի	հատ	1	18 000
274	Միջադիր ներածման կոլեկտորի	հատ	1	18 000
275	Փականի չորուկ	հատ	1	3 600
276	Խտարար փականի	հատ	1	18 000
277	Փականի կամրջակ	հատ	1	13 500
278	Զտիչի ռադիատոր	հատ	1	45 000
279	Յուղի զտիչի պատյան հավաքակայան	հատ	1	108 000
	Այլ պահեստամասեր			
280	Հիդրավլիկ մուրճի ջարդիչ	հատ	1	108 000
281	Հիդրոմուրճի կարգավորող կափյուր	հատ	1	225 000
282	Հիդրավլիկ մուրճի խտարարներ	կ-կտ	1	126 000
283	Ճկախողովակի կափույր	կ-կտ	1	90 000
284	Հիդրոմուրճի պարկուճ	հատ	1	360 000
285	Հիդրոմուրճի դրսի վռան	հատ	1	72 000
286	Հիդրոմուրճի ներսի վռան	հատ	1	54 000
287	Հիդրոմուրճի հեղյուս	հատ	1	76 500
288	Հիդրոմուրճի հարվածիչ	հատ	1	366 700
289	Ջարդիչի մատ	հատ	1	27 000
290	Ազոտ պահող կափյուր	հատ	1	45 000
291	Տարա	հատ	1	1 820
292	Ռետինե օղակ	հատ	1	2 700
			Ընդհանուր գումար	**27 884 020**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ա. Հարությունյան
Կ.Տ.

Հավելված N 2
17.05. 2023թ. կնքված
N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-13/23-03/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-2024թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												Ընդամենը
			2023թ							2024թ					
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	
1	50111130	**JCB 3CX էքսկավատորի տեխնիկական սպասարկում և նորոգում**	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	**1500000**

Վճարումը կկատարվի հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի (գործարքի) վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում (հիմք՝ ՀՀ կառավարության 17 մարտի 2022 թվականի N 319-Ն որոշում):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

..... **Ս. Մաթևոսյան**
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

..... **Ա. Հարությունյան**
Կ.Տ.